



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

թիւ 7.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ՉՄԻՆ

ՆԻՍ ԵՅԹԵՐՈՐԿ

9 ՀՈՅՆԵՄԵՐ 1870



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻԻՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԵՕԹԵՐՈՐԴ

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1870.

ՆԱԽԱՊԱՀ . — ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԱՏԵՆԱՊԵՏ . — Գ . ՕՏԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ԽՆԴՐՈՑ ԿԱՐԳ

- 1° Կաթողիկոսութեանց խնդրոյն վերջին որոշում .
- 2° Վերաբնութիւն Աղգային Սահմանադրութեան .
- 3° Ժողովրդեան կողմանէ ներկայացեալ հանրագրեր .
- 4° Ընթերցումն եւ հաստատութիւն ատենական կանոնաց .

Ատենը բացվեցաւ ժամ 7 1/2 ին ի ներկայութեան 49 երեսփոխանաց, որոց թիւը հետըզնետէ 70 ի հասաւ .

Փոխատենապետ Աղաբէկեան էֆ . յիշեցնելով թէ այս օրվան նիստին առաջին խնդիրը Սոյ եւ Աղթամարաց կաթողիկոսութեանց խնդրոյն վերջնական որոշումն է, նախորդ նիստին խօսից կարգին համեմատ խօսքը Օտեան էֆէնախին առաւ, որ ատենապետութեան Թիտը ձգելով խօսքն առաւ .

ՕՏԵԱՆ ԷՖ . — Սոյ կաթողիկոսութեան խնդրոյն վրայ մէկ քանի նիստերու մէջ տեղի ունեցած երկար վիճարանութիւններէն ետքը, չ'էի համարձակեր ժողովին յոգնած ուշադրութիւնը խնդրելու իմ խօսքերուս համար, եթէ առաջուց միաքս զրած չ'ըլլայի հոն բերել յանդեցնել խօսքս՝ որ խնդրոյն միաբան ու խաղաղական լուծում մը կարելի ըլլայ : Բայց զայդ չ'ըրած՝ իմ իրաւունքս է, իմ պարտքս է, բացարեւ մեր կարծիքն ու իր պատճառները .

Երկու կարգ առարկութիւնք մէջ բերվեցան թեր կարծիքին դէմ, որուն առաջարկութիւնը

մենէ ալ չ'էր, որ դեռ երկու ամիս առաջ բնոր ազգին կարծիքն էր : Անոնց որ իբր կրօնական մոլորութիւն մը կը համարէին այս կարծիքը, եկան յարեցան անոնք որ իբրեւ արամարանական մոլորութիւն մը համարեցան : Առաջին առարկութեան հեղինակները ըսին թէ այդ առաջարկութիւնը էջմիածնայ Թիտին իրաւասութեանը դէմ դարան մըն է . երկրորդ առարկութեան հեղինակները ըսին թէ ժողովրդին ընտրական իրաւանցը սանհարութիւն մըն է . եւ այս երկու կարգ առարկութեանց յարուցած խորհրդածութիւններուն խառնվեցաւ զրտէն քան թէ ներսէն խառնաշփոթ ձայն մը թէ մենք մէկ քանի երեսփոխան իբրեւ քաղաքականութեան վերաբերեալ մարդիկ այս խնդրոյն մէջ, ինչպէս ամեն աղգային խնդրոց մէջ, քաղաքականութեան մը եւ ազգացութեան մը կը ծառայենք : Ո՞վ հնարեց այս անհեթեթ ամբաստանութիւնը . ով որ հնարեց նա միայն զիտէ պատճառը : Ի՞նչ վատութիւն, ի՞նչ ցած սիրտ պէտք է ենթադրել աղգային պաշտօնեայի մը քով, որ իր առօրեայ շու-

հերոսն ու սին պատիւներու զոհէ զժրագր ազգի մը, իր ազգին, մշտնջենաւոր շահերը, Նթէ այնպիսի ազգային մը կը դանդի որ օտար քաղաքականութեան մը կը ծառայէ, ա- նիծեալ ըլլայ, երբնս անիծեալ այնպիսին:

Բայց տեսնենք ինչ արժէք ունին մեզի դէմ բերված առարկութիւնները. այդ առարկութեանց պիտի պատասխանեմ, որպէս զի ընտելիք մը չըսեմս իմ խօսքերուս մէջ, միայն մեր կարծիքը իր պատճառներովը բացատրելով: Եւ այս պարտքս պիտի կատարեմ որչափ կարելի է կարճ կերպով, ժողովին վայր- կեաններուն խնայելով:

Ինչ է այս Սոց կաթողիկոսութեան խնդիրը. ինչ իր նշանակութիւնը, տարածութիւնը, հետեւանքները: Չայս իմանալու համար տեսնենք նախ թէ ինչ է Եջմիածնայ կաթողիկոսութիւնը: Եջմիածնայ կաթողիկոսը, համայն ազգին, թէ ի Թուրքիա, թէ ի Ռուսիա, Պարսկաստան, Հնդկաստան եւ մինչեւ ի ծագրու աշխարհի ուր հայ մը կայ, բոլոր հայերուն կաթողիկոսն է ու հոգեւոր գլուխը: Այս է Եջմիածնայ կաթողիկոսը եւ ես ուզողներէն եմ ու ամենքս կ'ուզենք որ այսպէս մնայ: Ոչ թէ Եջմիածնայ քաղքին յարեալ եմ. ես կը կարծեմ թէ ոչ երբէք քաղքի մը պէտք է յարիլ. մեր նախնիք չը յարեցան քաղքի, եւ ամեն տեղ, Եջմիածին, Գուին, Անի, Սիս, Կաթողիկոսին անկախութիւնը պաշտեցին, ուր որ հանդիստ գլուխ մը եւ ազատութիւն կրնար ունենալ՝ հոն փոխադրելով կաթողիկոսը: Բայց մեծ եւ ազգային պատճառ մը կայ Եջմիածնայ յարելու համար. Եջմիածնայ կաթողիկոսը մի միայն հոգեւոր գլուխն է որ Ռուսիոյ հայերը միացուցած է եւ կրնայ միացնել Թուրքիոյ հայերուն հետ: Եթէ Եջմիածնայ կաթողիկոսը մեր այ կաթողիկոսը չըլլայ, ազգին երկու մեծ հատուածները կը բաժնվին իրարմէ:

Հիմա տեսնենք թէ ինչ է Սոց կաթողիկոսը. — Սոց կաթողիկոսը ոչ առաջնորդ մըն է, ոչ Յունաց Անտիոքայ ու Աղէքսանդրիոյ Պատրիարքներուն պէս Պատրիարք մը. ոչ թէ մեծն եւ եպիսկոպոս օծելուն համար կաթողիկոս է, այլ մեծն ու Եպիսկոպոս կ'օծէ վասն զի կաթողիկոս է: Սոց կաթողիկոսը ուրիշ բան չ'է, այլ Եջմիածնայ կաթողիկոսին հակառակածն է, թող ուրանայ ով որ կ'ուզէ իր այս յատկութիւնը, պատմութիւնը բարձրաձայն կը հո շակէ զայն: Հակառակածն. ուրեմն ապստամբ է, ուրեմն այդ կաթողիկոսութիւնը կարգաւորեալ անիշ-

խանութիւն մըն է, դայթակղոթիւն մը, սոց պատմութիւն մը ազգին ու եկեղեցւոյն, ուրեմն պէտք է վերցնել զայն: Զէ. պէտք է պահել Սոց կաթողիկոսութիւնը, եւ զիտէք ինչնու համար. — Եջմիածնայ կաթողիկոսութեան համար: Եթէ Սոց կաթողիկոսութիւնը վերցնես, մեծ վնաս կը հասցնես Եջմիածնայ կաթողիկոսութեան: Զարմանալի հակասութիւն, եւ մանաւանդ անտնք պէտք է դարմանան որ ազգային քաղաքականութեան վերաբերեալ խնդիր մը տրամաբանութեամբ լուծելու եղան. . . եւ այս այնքան իրաւ է որ ես վստահութեամբ կ'ըսէի թէ այսօր Սոց կաթողիկոսութիւնը վերցնելը՝ ապագային մէջ Եջմիածնայ կաթողիկոսութիւնը վերցնել է: Բայց աչքերնուս առջեւ եղածին վրայ խօսինք: Քիչ մ' առաջ անկախութիւն կ'ընէի Եջմիածնայ կաթողիկոսին անկախութեան խնդրոյն: Իմ անկախութիւնս վստահ եմ որ բոլոր ազգին զգացմանը կը պատասխանէր: Հարկ չ'է որ այս կետին վրայ բացատրութեան ու պատճառարանութեան մէջ մտնեմ: Իմ քիչ բաժնէս շատ կը խելամաղ: Ամենուն յայտնի է թէ Եջմիածնայ կաթողիկոսութեան վիճակի մը մէջ չ'է եւ ամենքը կ'ուզեն իր անկախութիւնը վերադարձնել իրեն, այն անկախութիւնը որ անանորինելի է եկեղեցւոյ ու ազգին համար: Թէ եւ կաթողիկոսը ինք չ'ուզելու ըլլայ, դարձեալ մենք պէտք է ուզենք, վասն զի կ'սթողիկոսը ոչ թէ իրեն համար կաթողիկոս է՝ այլ ազգին համար: Արդ այս հարկը որ ամենը կ'ընդունին, ունիք կ'երկուսնան ու կ'ըսեն. « Ինչպէս մենք տկար ու հպտակ ազգ մը՝ պիտի « կրնանք պահանջել ու ընդունիլ Եջմիածնայ « կաթողիկոսին անկախութիւնը, Պալատէնեա- « ին բարձու մը. ինչ զօրութիւն եւ ոյժ ունինք « հզօր տէրութեան մը դէմ»: Գիտէք զի մեր զօրութիւնը, մեր ոյժը. — Սոց կաթողիկոսն է: Քանի որ Սոց կաթողիկոսը կեցած է, երբոր ուզենք կրնանք Եջմիածնայ կաթողիկոսին անկախութիւնն ու Պալատէնեայի բարձու մն ընդունիլ. եւ երբ այս արդիւնքը ձեռք բերենք, այն ատեն պէտք է ըսիսինք մտածել Սոց կաթողիկոսութիւնը վերցնելու համար:

Մինչեւ հիմա ըսածներէս կը հետեւի թէ Սոց կաթողիկոսը պէտք է մնայ իրրեւ կաթողիկոս. այլ որչափ կարելի է պէտք է վերնայ իրրեւ հակառակածն: Ոչ թէ միայն վասն զի դայթակղոթիւն ու անպատմութիւն մըն է. այլ եւ վասն զի օր մը վստահաւոր

կրնայ ըլլալ, եթէ Եջմիածինէն ու նոյն իսկ Եստրքիոյ մէջ Կեղերանական վարչութիւնէն անկախ կերպով կատարվելով իր ընտրութիւնը, բոլորովին ազգէն անջատ մարմին մը կազմէ: Կնչ որ կը պատահի եւ թերեւս քանի մը օրէն պիտի պատահի մեր հոռոճական ազգայնոց համար որ իրարու դէմ երկու Պատրիարք եւ երկու Կիլիկիոյ կաթողիկոս պիտի աւանան թերեւս, մեզի համար այ կրնայ պատահիլ:

Ահա վստահոր. այս վստահին առջեւն առնելու բնական միջոց է Եջմիածնայ կաթողիկոսին վաւերացեալ զիտել. բայց այն օրէն որ Եջմիածնայ Ենթարկի Սոց կաթողիկոսը, այն օրէն ոչ եւս է կաթողիկոս, եւ ոչ եւս մեր ազգի կազմը ապահովողը կը ծառայէ: Այդ արդիւնքը, ինչպէս նաեւ իրրեւ հակառակածն վերցնելու արդիւնքը, երկուքը մէկ տեղ ձեռք բերելու միջոցի ըստ իս Քաղ. ժողովոյ առաջարկութիւնն է, մեր կարծիքն է, այն է որ Ընդհ. ժողովն ընտրէ կամ մամնակցի Սոց կաթողիկոսին ընտրութեանը: Երբ Ընդհ. ժողովը որ Եջմիածնայ թեմն է, իրեն գլուխ ունենալով Ս. Պատրիարքը որ Եջմիածնայ Ահաթայի կ'սթողիկոսն է, անուզողի կերպով կը միանայ նա ընդհանուր եկեղեցւոյն հետ, եւ ոչ եւս կը կազմէ կամ կրնայ կազմել ապագային մէջ անջատ մարմին մը: Ընդհ. ժողովը կ'ընտրէ ոչ թէ Կիլիկիոյ առաջնորդը, Կիլիկիա գտա իր առաջնորդները կրնայ ունենալ, կամ թէ կաթողիկոսը միանգամայն առաջնորդ ալ կրնայ եղած ըլլալ, ընդհանուր եկեղեցւոյ կանոնադր հետեւելով, ինչպէս Յունաց Պատրիարքը Պօշոյ առաջնորդն է, ինչպէս Պապը Հռոմոյ առաջնորդն է, բայց իրրեւ Պատրիարք կամ Պապ կ'ընտրվին եւ ոչ իրրեւ առաջնորդ, զի աւելի մեծ պաշտօնին պայմաններուն առջեւ կ'անկրեւին փոքր պաշտօնին պայմանները, եւ այս ընտրութեամբ ոչ երբէք ընդհանրական կիւրքը կը զրոյշմէ իր ընտրելոյն, այլ ինչպէս Երուսաղէմոյ Պատրիարքը կ'ընտրէ իրրեւ Երուսաղէմոյ Պատրիարք, եւ ոչ մէկուն մարքէն անցած է կամ կրնայ անցնիլ թէ այդ ընտրութեամբ անի Թուրքիոյ հայոց Պատրիարքն եղած ըլլայ: Եւ այս կերպով կը գոյանար մեր ամենուս համար ցանկալի լուծումը խնդրոյն: Սոց կաթողիկոսը կը մնար իրրեւ կաթողիկոս եւ կ'անհետանար իրրեւ հակառակածն:

Բայց այդ լուծումը յաջողելու համար մէկ բան մը պէտք էր, այն որ ամենքը միասիրտ միախորհուրդ ըլլային եւ այլ ընդ այլոյ մեկ-

նութիւններ ու տարաձայնութիւններ այս լուծման բնութիւնը եւ նշանակութիւնը չը խանդարէին ու այս կերպով ընդունվէր ամենէն, ու մինչեւ անգամ Եջմիածնայ կաթողիկոսն ալ գտնէ իր լուծեամբը հաւանէր: Այնպէս ալ եղած էր: Եկեղեցական համագումար ժողովը այսպէս որոշած, երեսփոխանական Ընդհ. ժողովը այսպէս վճռած, ժողովուրդը այս մտքով իր ձայնը բարձրացուցած, օրագիրները՝ որ հասարակութեան բերանն են կ'ըսվի՝ նոյնը ազագուհած, ազգային հին ու նոր Սահմանադրութիւնները այսպէս սրամագրած, եւ նոյն իսկ Եջմիածնայ կաթողիկոսը իր մէկ կոնդակին մէջ դայն հաստատած էր: Ահա ասոր համար ըսի խօսքիս սկիզբը թէ մեր կարծիքը բոլոր ազգին կարծիքն էր երկու ամիս առաջ, Բայց այսօր այնպէս չէ. ինչնու. պատճառը չ'եմ քնտեր, իրը կը հաստատեմ: Սոյն Ընդհ. ժողովը երկուքի բաժնված է. Ընդհ. ժողովն դուրս աւելի շատ են տարաձայնութիւնները. նոյն իսկ պատկառելի միաբանութիւն մը, Արմաշու վանաց միաբանութիւնը արժան տեսեր է պաշտօնական կերպով եւ ապագրութեամբ բողոքելու մեր պաշտպանած առաջարկութեան դէմ. տարակոյս չ'ունիմ որ քիչ օրէն բողոք մըն ալ Եջմիածնայ Ահաթայի կաթողիկոսէն պիտի հասնի, զի ինչ որ դրեն իրեն ոմանք՝ պատրաստ է նա հաւատալու: Այս տրամադրութեան մէջ, այս վիճակին մէջ կը վախնամ որ մեր պաշտպանած առաջարկութիւնը ցանկացեալ արդիւնքը չը պիտի կրնայ տալ: Անոր համար ըսի խօսքիս սկիզբը թէ հոն պիտի բերեմ յանդեցնեմ որ խնդրոյն միաբան լուծում մը կարելի ըլլայ: Ես իմ կողմէս առաջարկութիւն չ'եմ ընեմ, որովհետեւ ըստ իս իմ պաշտպանած կարծիքս էն լաւ առաջարկութիւնն էր. այլ միայն սա կ'ըսեմ, — եւ կ'ուզեմ որ այս ըսածս մնայ Ընդհ. ժողովոյ արձանագրութեանցը մէջ, զի այսօր կիրքով կը դատեն մարդիկ, անիրաւութեամբ կըրնան դատել. այլ ապագային դատաստանը միշտ անաչառ է. — սա կ'ըսեմ ու սա կ'ուզեմ՝ որ Ընդհ. ժողովոյ որոշումէն այնպիսի արդիւնք մը հետեւի որ մինչեւ հոս բացատրած ազգային քաղաքականութիւնս անվթար մնայ: Եթէ այս արդիւնքն ելլայ Ընդհ. ժողովոյ մը եւ է որոշումէն, զոհութեամբ ու ցնծութեամբ կ'ընդունիմ եւ զայն:

Այս է վերջին խօսքս, լմընցուցի: ԵՌՍՈՒՅԵԱՆ ԷՅԾ. — Երբ նախընթաց նիստին մէջ շատերուն հետ խօսք ուղեցի այս

խնդրոյն վրայ, գիտաւորութիւնն չ'ունէի անոր մանրամասնութեանց մէջ մտնել, այլ նպատակս էր Ռուսիոնեան էֆէնտիի հետալից ստեղծութեան այն կետերուն պատասխանել որք վարչութեան կ'ակնարկէին. սարգել հակիրճ բանիւ թէ մեր ընդդիմաբանից գրեթէ ամենուն կողմէն թիւր ըմբռնված եւ սեկնված էր Քաղ. ժողովին առաջարկութիւնը. բայց որովհետեւ կ'իմանամ այսօր թէ Ռուսիոնեան էֆ. նոր առաջարկութիւն մ'ունի, որով թիւրիմացութիւնները պիտի վարատէ, եւ Ստեան էֆէնտիին յուսացածին պէտքերստիանաց կարծիքը խնդրոյն միաբան լուծմանը պիտի առաջնորդէ, ուստի խօսքիս կարգը Ռուսիոնեան էֆ. կը թողուամ, կարծելով թէ միւս եւս հարկ չը մնար ինծի խօսելու: Իսկ եթէ գիտողութիւն մ'ընել հարկ ըլլայ, այն առն խօսք կը խնդրեմ:

ՌՈՒՅԻՆՆԵԱՆ ԷՖ. — Էֆէնտիներ, Յուսամ որ այսօր խնդիրն իր վերջին որոշումն ըստանայ եւ կարծիքները յուսացեալ միաբանութեան կարենան հասնել: Աետ մը կայ խնդրին մէջ որոյ վրայ երբէք չը խօսվեցաւ, եւ անոր համար է՛ կը տեսնեմ որ բնագէտ ի միութիւն ձկտեալ միտքերը՝ մէյ մը կը մերձենան մէյ մ'ալ յանկարծ սարսուցեալ կը խորշին իրարմէ. բայց կը յուսամ որ ցանկացեալ միութիւնը ալ պիտի կարենայ գոյանալ հիմա:

Իմ առաջարկութեանս մէջ երկու կետ կարառաջինը՝ ընտրութիւնը գաւառին. երկրորդը՝ վաւերացումը կեդրոնին: Ընտրութեան իրաւունքին վրայ բաւականէն աւելի եւ գուցէ խիստ աւելի ալ խօսվեցաւ, եւ այսօր՝ եթէ ոչ խարխիւմ՝ ամեն երեսփոխանք համախոհ են թէ գաւառինն է այդ իրաւունքը. ուստի առաջին կետը մէկ գիւ թողոյ՛մ երկրորդին վերայ երկու բառ կ'ուզեմ խօսիլ, վաւերացման իրաւունքին վրայ՝ որոյ վրայ դեռ խօսող մը չ'եղաւ:

Ի՞նչ է վաւերացումը. եւ կեդրոնն ուրիշ կ'առնու վաւերացման իրաւունքը:

— Վաւերացումը՝ եղբուրթեան մը օրինաց համաձայն ըլլալը պաշտօնագէտ հաստատել է, կեդրոնն այս հեղինակութիւնը բարոյագէտ իր ձեռնհասութեանէն կ'առնու եւ նիւթագէտ ընդհանուր ազգէն զոր կը ներկայացնէ:

Ահա այս ընդհանուր իշխանութեամբն է որ կեդրոնական վարչութիւնը յանուն ազգին երեսփոխանաբար կը տիրէ մասնաւոր այսինքն գաւառական վարչութեանց վրայ եւ ա-

սոնց արարքը կը փորձարկէ (+նշուշլ). եւ ահա այս իրաւունքն է որ գաւառական առաջնորդի մը այսինքն նոյն վարչութեան գլուխն եղող պաշտօնէին՝ ինչ անուն ալ եւ ինչ աստիճան ալ կրէ՝ ընտրութիւնը կը վաւերացնէ, եւ պէտք է որ վաւերացնէ զի միանգամայն իր պարտաւորութիւնն է: Հարկ է կրկնել թէ վաւերացնելու կարողութեանն կը բղխի նաեւ բեկանելու կարողութիւնը, որ բունութիւն մը չ'է այլ օրինաց գործադրութիւնն է: Երբ զընտրեալն ու զընտրութիւնը ըստ ամենայնի համաձայն գանձ օրինաց, չ'է կարող չը վաւերացնել. եւ երբ ընդ հակառակը՝ անհամաձայն գանձ, չ'է կարող չը բեկանել. զի այս երկու պարագայից մէջ ալ իր պարտաւորութեանը գէ՛մ մեղանշած կ'ըլլայ:

Այս նկատողութիւններէն յայտնի կը տեսնուի որ՝ վաւերացնելու իրաւունքը ընտրելու իրաւունքէն վեր կարողութիւն մըն է, բարձր հակողութիւն մը վերատեսչութիւն մըն է. ընտրողը վաւերացնողին ենթակայ, եւ վաւերացնողը ընտրողին գերակայ, որովհետեւ ընտրողն իրմէ վեր հեղինակութիւն մը կը ձանձկէ եւ անոր կը դիմէ իր գործողութիւնն անկէ հաստատել ապու համար:

Արդ՝ ինչ է մեր ըսածը, մեր ուզածը. — Ի՞նչ որ վաւերացնող եւ, գերագոյն կարողութիւնն եւ, մի խոնարհիւր կ'ըսենք եւ մի խառնովոր ընտրողին գործողը ի՞նչ է մեր ուզածը. — Այդ գաւառին ընդհ. առաջնորդը՝ ինքնազուխ պաշտօնեայ մը չ'ըլլայ Ազգային կեդրոնէն անկախ, այլ մնայ միշտ անոր իրաւասութեանը տակ: Այս նպատակը մեզի համար ձեռք բերված է վաւերացման իրաւունքով եւ անով միայն:

Ի՞նչ է ձեր ըսածը, ձեր ուզածը. — Ձեր ուզածն ալ մեր ուզածն է եւ նպատակնիս մի եւ նոյն է. բայց դուք կ'ըսէք թէ այս միաբան ցանկացեալ նպատակը ձեռք բերելու չը բաւէր վաւերացման իրաւունքը զոր բառ մը կը կարծէք յօգս ցնդելի. ուստի ընտրութեան իրաւունքին ձեռն մխել կը խորհիք. եւ ասոր համար կ'երթաք պաշտօնեայն իր հովուական կամ առաջնորդական բնութեանէն դուրս նրկատելով իր շնորհական աստիճանին մէջ գատել մի թէ աստիճանը կրնայ խափանել ըզ պաշտօնը՝ կամ ասոր կարեւորութիւնը գերազանցել մի թէ եկեղեցւոյ էն գերազանձ աստիճանն իսկ ի ծառայութիւն ժողովրդեան չ'է մի հաստատեալ պաշտօնն է մի առաջ թէ աստիճանը՝ արդեօք մըր որու համար ստեղծեալ է. Եկե-

ղեցին ժողովրդեան համար թէ ծագու չուրքը եկեղեցւոյ համար:

Այս խորհեցէք, եթէ մեր բնական իրաւունքը չը բաւէ մեզի որ վաւերացման իրաւունքն է, ինչպէս պիտի բաւէ ընտրութեան իրաւունքը որ ուրիշին իրաւունքն է, մանաւանդ ինչ մահաոթիթ հարուած առած կ'ըլլանք մեր կեդրոնական իշխանութեան եթէ մենք զանի իրաւունքին տիրջը ձեռքէն յախշտակենք:

Այս խորհեցէք, եթէ կ'իլլիկիոյ կաթողիկոսը չը կարենաք նկատել իրրեւ առաջնորդ եւ իրրեւ գլուխ նոյն գաւառական վարչութեան, խոյս կու տայ չէ թէ միայն ձեր վաւերացման իրաւունքէն, այլ գուցէ նաեւ գաւառին ընտրութեան իրաւունքէն, եւ գլուխ կը վերագառնայ սոսկ եկեղեցական իշխանութեան: Բայց անկարելի է ուրիշ կերպ նկատել եւ ձեր առած փաստերը մերկններուն հետ յարակցապէս կը հաստատեն անոր հովուական բնութիւնը. եւ ընտրութեան իրաւունքը կեդրոնին առնելու համար ինչ փաստեր որ տուիք ամենն ալ իրաւացի են վաւերացման իրաւունքին համար եւ հզօրեղապէս կը հաստատեն թէ այս իրաւունքը կեդրոնին է:

Վաւերացման իրաւունքին տեսական մասին վրայ այսքանս հերկք, եւ թուղթի վրայ խիստ աղէկ. գանք գործնականին եւ ընտրողն ու վաւերացնողը զէ՛մ առ զէ՛մ բերենք իրարու եւ հոս պիտի համոզվինք որ ամենուս ցանկացեալ նպատակը հնար է ձեռք բերել: Ընտրողն ու վաւերացնողը վտիսադարձ յարաբերութեան մը մէջ են. բայց ինչպէս պիտի գործեն: Այս յարաբերութիւնը պաշտօնագէտ ի գործ չը գրված ընտրողն իր ընտրական գործողութիւնը չ'ըսկրտած՝ նախադրու թեան համար կրնայ բանակցութեան մասնիկ վաւերացնողին հետ եւ ըսել անոր. որոնք են քու օրէնքդ որոյ համաձայն կը պահանջես իմ ընտրութիւնս՝ զանի վաւերացնելու պարտաւոր ըլլալու համար, եւ որոնք են այն պայմանները որոնցմէ պէտք է յախշիմ, որպէս զի չը պարտաւորիս իմ ըրած ընտրութիւնս ըստ օրինի բեկանելու. որպէս զի ես չը սխալիմ տուր ինծի օրինաց հրահանգները եւ ըստ այնմ վարվիմ: Եթէ ընտրողը չը ներկայանայ, վաւերացնողը կը պարտաւորի իր կողմէն դարձեալ նախադրու թեան համար՝ օրինաց հրահանգները հաղորդել ընտրողին, որպէս զի չը պարտաւորի կատարված ընտրութիւն մը բեկանելու, զի այս գործողութիւնը ծանր է թէ բեկանողին համար թէ ընտրողին 4ւ թէ ընտրելոյն: Ահա այս փոխադարձ յարա-

բերութեան մէջ կը ծնի ներդաշնակութիւնը, եւ գործը սարգեալ կը դիւրանայ:

Արդ՝ այժմեան վիճակին մէջ ընտրող մարմինը ներկայ չ'է պաշտօնագէտ գործը վաւերացնողին կը մնայ: Կ'իլլիկիցիք ուսմանք մեզի դիմեցին, բարեպատիւ անձինք՝ որք ոչ նիկողոսի են կուսակից եւ ոչ Թորոսի, այլ ճշմարտագէտ իրենց դատարին բարեկարգութեամբ նախանշախնդիր, շնորհակալութիւն յայտնեցին Ընդհ. ժողովէն որ թեմականաց ընտրութեան դարաւոր իրաւունքը յարգելու արամադիր է, եւ ըսին թէ՛ մեր գաւառական ժողովը դեռ կազմեալ չ'է, կ'ազերտենք որ վարչութիւնը ընտրութեանց հրահանգներուն հետ յատուկ գործակալ մը զըրկէ որ հակէ թէ նոր ժողովականաց եւ թէ նոր կաթողիկոսին համար ըլլալու ընտրական գործողութեանց վրայ:

Այսպէս ցանկալի եւ պէտք է որ ըլլայ, եւ երբոր այսպէս ըլլայ՝ յայժմամ խնդիրը կը լուծուի, չ'իտթութեանց եւ կանխակալ երկիւղներու առջեւն անված կ'ըլլայ եւ ամեն կողմի ու վախաբիգոհունակութեան առիթ: Կաթողիկոս բարձող կամ բարձրացնող չը կայ. կաթողիկոս առաջնորդութիւն մը գտվեր է որ եւ է կերպիւ գաւառի մը մէջ, զանի բարեկարգել է ամենուն ուղածը ազգային Վարչութեան հեղինակութեամբը: Ի՞նչ է վերջագէտ ձեր այս զգուշութիւններն ու ապահասները. այն գայթակղիչ զէպըը չ'է որ պատահեցաւ Սոսյ աթոռին վրայ՝ անարժան անձի մը հոն բարձրանալու յանգուցութեամբը, զոր իրաւագէտ լուծեալ ի սպաշտօնէն գահազուրկ ըրիք, եւ կը վախնաք որ մէյ մ'ալ չը պատահի. մերն ալ է այդ վախը: Բայց այս երկիւղնիս պիտի վարատի վաւերացման գործնական մասին մէջ, երբոր մեր գործակալը՝ մենէ հրահանգեալ գաւառական ժողովը կազմելէն ետքը, ընտրելեաց ցանկը պատրաստել տայ հոն ըստ օրինի եւ մեր կասկածելի անձը կամ ըստ օրինի անընդունելի ընտրելի մը տեսնէ նէ, դուրս ձգէ այն ցանկէն. ալ ինչ երկիւղ կը մնայ մեզի. ընտրութիւնը ետքէն սրբազրելու տեղ՝ ընտրելեաց ցանկը առաջուց կերպով մը սրբազրած ըլլալէդ ետքը՝ ընտրողութեան պատիւը գոնէ չ'ես մի թողուր Գաւառական վարչութեան: Հարկաւ պիտի թողուս, զի անոր իրաւունքն է զոր նա քեզի չը թողուր:

Եւ դարձեալ քեզի պիտի գայ այս ընտրութիւնը. քու գաւառնոր հեղինակութեանդ պիտի ենթարկի. որովհետեւ գործնական մասին

մէջ ենք, նայինք ինչ պիտի ընես: Ընտրութեան տեղեկագիրը Գաւառական վարչութեան կողմէն կու գայ Ազգորոնական վարչութեան: այս վարչութեան մէջ որոնք են այն ձեռնհաս մարմինները որք պիտի քննեն ու գտնեն առաջնորդ պաշտօնեայի մը ընտրութեան տեղեկագիրը: — Կրօնական մասին համար՝ քու կրօնական խորհուրդդ է, քաղաքական մասին համար՝ քու քաղաքական խորհուրդդ է: այս երկու մարմինները միանալով կը քննեն եւ ըստ այնմ կը անօրինակ վաւերացում կամ բեկում: Սահմանադրութեան մէջ այս վաւերացման եզրանակին վրայ տրամադրութիւն մը չը կայ, վարչութեան ղեկավարներ թողլած կը թելի իսկ եւ վերաքննութեան մէջ առաջարկելու համար՝ սոյն օրինակ խմբագրած եւ արդէն զանի ընդհանուր առաջնորդաց ընտրութեան համար եւ ի լրումն նոյն յօդուածին իրրեւ ծանօթութիւն: « Գաւառական վարչութիւնը Պատրիարքին կ'ուղերձէ այս ընտրութեան տեղեկագիրը դոր Խառն խորհրդով կը քննէ ու կը վաւերացնէ, եթէ խորհուրդը զայն ընտրութիւնը ըստ ամենայնի համաձայն գտնէ օրինաց Եկեղեցւոյ եւ Սահմանադրութեան»:

Ընտրութիւնը սր իրաւամբ գաւառին ըլլալը արդէն բացատրած եւ: վաւերացումը սր իրաւամբ կեդրոնին ըլլալն ալ ահա բացատրեցի ըստ իմ կարի, նոյնպէս եւ ինչ պարագաներով ըմբռնելու զայս իրաւունքը իր գործադրական մասին մէջ: ուստի կ'առաջարկեմ որ այս առաջարկութիւնս քրէի զրօնի նոյն խմատով որով պատիւ ունեցայ բացատրելու պատկաւելի ժողովիդ առջեւ:

ԵՌՍՈՒՅԵԱՆ ԷՖ. — Ինչպէս կը յուսայի Ռուսիանէն էֆէնտին բացատրեց թէ վարչութիւնն ինչ կերպով եւ դիտումով ըրած է իր առաջարկութիւնը: Եւ ահա հոս կը համաձայնինք մեր ընդդիմաբանից հետ: վարչութեան առաջարկութիւնն էր ընտրելեաց ցանկը գաւառէն ուղել, Ռուսիանէն էֆէնտին կ'առաջարկէ նոյն իսկ ընտրութիւնը գաւառին մէջ ընել եւ վաւերացումը կեդրոնին բերել: այս մասին Քաղ. ժողովոյ կարծիքը նոյն է որ ընտրութիւնը Խառն ժողովով քննելու է ետքը Ընդհ. ժողովին բերով ի վաւերացումն: Կը հարցնեմ թէ Ռուսիանէն էֆէնտին ինչ կարծիք ունի այս մասին:

ՌՈՒՍՈՒՅԵԱՆ ԷՖ. — Ես անտարբեր եմ կրնամ ըսել այդ մասին, ինծի համար հերիք է որ վաւերացումը կեդրոնին ըլլայ եւ կեդրոնին մէջ ըստ պատշաճին անօրինակ: Կրօնական եւ Քաղ. խորհուրդները ձեռնհաս են այդ վաւե-

րացման: ըստ իս հարկ չը կայ Ընդհ. ժողովին բերելու, իսկ եթէ կ'ուղէք կրնաք ընդհանուրին բերել կամ աւելի բարձրագոյն աստիճանով հանել:

ԵՌՍՈՒՅԵԱՆ ԷՖ. — Ռուսիանէն առաջարկողն անտարբեր է այս մասին, վարչութիւնը կ'ընդունի՝ « ընտրութիւնը գաւառին եւ վաւերացումը կեդրոնին » առաջարկութիւնը: բայց կը խնդրէ որ վաւերացումը կեդրոնին մէջ Ընդհանուր ժողովին ձեռք ըլլայ:

ՓՈՒՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գոնովեանը կը տեսնեմ որ կարծիքները կը լուսաւորվին եւ խնդիրը կը պարզի: այսու ամենայնի նախորդ նիստին մէջ խօսք ուզող ատենադասից կարգը պիտի պահեմ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ ժողովին հարցով թէ կ'ուղէ նախորդ նիստին խօսք ուզողներուն կարգը պահի թէ ոչ: Այս կարգը պահելն անցեալ նիստերու մէջ աղէկ արդիւնք յատաճ չը բերաւ:

ՕՏԵԱՆ ԷՖ. — Ժողովը կրնայ բացլած վիճաբանութիւն մը գողել, բայց զայն չ'ըրած չը կրնար նախորդ նիստէն խօսք ուզողներն արգելուլ, մանաւանդ զանոնք որ ատեն չ'են ունեցած խօսելու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ռուսիանէն եւ Եստուֆեան էֆէնտիններու մէջ եղած բանակցութեան վրայ խօսք ունիմ: բոլոր ատենադասից լեզուին տակ թաքուն ձեւ մը շփոթութիւն մը կայ որ պէտք է վերնայ, եւ որ միայն Օտեան էֆէնտին խօսքին մէջ բացայայտեալ է:

ՓՈՒՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքին կարգը Այս վառեան էֆէնտինն է:

ԱՅՎԱՏԵԱՆ Մ. ԷՖ. — Չեմ դիտեր թէ Փափակեան էֆէնտին ինչ պիտի խօսի, չեմ գիտեր թէ խնդիրն ուր էր առաջ, ես ալ խօսեցայ, խօսածս կը յիշեմ եւ նոյն համոզման ըրայ եմ: բայց խնդիրը ճապարհեցաւ:

Ինչպէս Օտեան էֆէնտին ըստ կատարեցի բան մը չ'ը կայ, բայց ջանք մը կայ որու վրայ յամախը կատարեմ կը յարուցանէ:

Ռուսիանէն էֆէնտին առաջարկեց ընտրութիւնը գաւառին եւ վաւերացումը կեդրոնին թողուլ: Քաղ. ժողովոյ ատենադպիրը ամեն առթի մէջ պնդեց թէ Սոս կաթողիկոսը առաջնորդէ պարբեր բան մըն է, ուստի եւ պէտք է որ ընտրութիւնն Ընդհ. ժողովն ընէ: Խնդիրը ամեն կողմ դարձնելէ եւ առաջին կետր բացարձակապէս ընդունելէ ետքը երկրորդին վրայ սա թէութիւնը կը գնէ թէ կեդրո-

նէն ըլլալու վաւերացումը գտնէ Ընդհ. ժողովն ըլլայ: ահա հոս է կատարեցի կետր, եւ չը գիտենք ինչ է պատճառը:

Ամեն գաւառ կարող է ինքնին իր ազգային գործերը կարգադրելու, միթէ միայն Սիս անկարող է: կը հաւանիմ թէ Սիս օժանդակութեան կարօտ ըլլայ, բայց այս ալ Քաղ. ժողովին պարտաւորութիւնն է: Եթէ Եջմիածնայ իրաւասութիւնը պաշտպանօրէնութեամբ Արեւելեան քաղաքականութիւն կը կասկածվի, Սոս խնդիրը պաշտպանելն այ Արեւմտեան քաղաքականութիւն պէտք է կասկածվի, որ է — Եւրօպէական: Այս ամեն գաւառական վիճակները բարեկարգ եւ միայն Սիսին անբարեկարգ չ'է: Կը միարանիմ Օտեան էֆէնտին որ Սոս կաթողիկոսութիւնը պահենք այնչափ որ Եջմիածին բարեկարգի, եւ չ'է թէ այն ստաիճանն որ Եջմիածնայ հաւասարի:

Խօսքս վերջացնելով կը կրկնեմ նաեւ որ Սրբազան պատրիարքին առաջարկութիւնը զըրաւորապէս երեսօտեանաց պիտի հաղորդվէր, սր է այն առաջարկութիւնը, սր է Ռուսիանէն էֆէնտինն առաջարկութիւնը, սր է իմ առաջարկութիւնս, որք կարգաւ քրէի պիտի գրվէին: դիւանն ըստ քմայ խնդիրն ու կարգը կը չըջէ: կը բողբեմ: Ասոնք ատենադրութիւնները մեղի պիտի յիշեցնէին: եւ տպեալ մեղի պիտի հաղորդվէր: Եթէ տպագրութիւնը կ'ուշանայ, անսնց մէկ համառօտ քաղաւածը պէտք է կարողացվի ամեն նիստին մեր յիշողութիւնը նորոգելու համար:

ԱՏԵՆԱՂՈՒՐ ԷՖ. — Այլատեան էֆէնտին դիւանին գէմ ուղղած բողբին ի պատասխան պարտ կը համարիմ յիշեցնել իրեն թէ Սրբազան Նախագահն իր առաջարկութիւնը ետ առաւ: իմ առաջարկութեանս երկրորդ կետին վրայ է վիճաբանութիւնը, հետեւապէս ձեր առաջարկութեան կարգը դեռ չ'է եկած: Իսկ ատենադրութիւնք խմբագրեալ են եւ տպագրութեան տրված, որոց ընթերցումը ժողովը կրնայ ընել երբ ուղէ:

Տ. ՄԵԲԻՍԵՆԵՅ ՎՍԻ. — Անցեալ նիստին խօսք ուղած էի Ռուսիանէն էֆէնտին առաջարկութեան հանդէպ: պէտք է շնորհակալ ըլլալ մեծապատիւ էֆէնտինն որ խնդիրն ուսումնասիրելով պարզ առաջարկութեան մը ներկայացուց, բայց նորա կարծեաց եւ դատողութեանց մէջ համոզմանս հակառակ կետեր կան, ուստի աշխատութիւնը յարգելով դատողութեանց կը պատասխանեմ: Այնպէս սկսաւ իւր խօսքն որ

ամեն ոք մեծ վտանգ գուշակեց եւ տաղնապ զգաց: թէ եւ ի վերջոյ ըսաւ թէ վտանգը բարոյական է, բայց մենք զայն ալ չը տեսնենք: Ըստ իս ամենէն մեծ վտանգը երեսօտեանութեան անգործութիւնն է, եւ ասոր վասակար հետեւանքը շատ լաւ կը տեսնենք եթէ մեր սահմանադրական վարչութեան անցելոյն վրայ ակնարկ մը նետենք: Այնպէս կը նշմարեմ թէ երեսօտեանական վարչութիւնը որ Ազգին հողին է, ամենէն գլխաւոր գրադումն եղած է մինչեւ ցարդ Յանձնաժողովներ կարգել, տեղեկագիրներ ընդունիլ եւ զանոնք անգործադրելի պահել: այնպէս որ միեւնոյն խնդիրն առանց իր լուծումն ընդունելու ստէպ երեսօտեանական ժողովոյ կը վերադառնայ: Կաթողիկոսական Յանձնաժողով մը տեղեկագիր մը կու տայ, եւ անոր անդամք իրաւամբ շնորհակալութեան արժանի են, եւ այսօր նոյն տեղեկագիրը իրրեւ թուղթ մնացած է եւ կաթողիկոսական խնդիրը նոր ինորոյ կը ներկայանայ այսօր երեսօտեանութեան: Ռուսիական խորհուրդը ընդարձակ տեղեկագիր մը տուած է՝ առանց գործադրութեան կը կենայ: մասնաւոր անձինք հանգանակութեան եւ այլ խնդրոյ վրայ առաջարկութիւններ ըրած են Ընդհ. ժողովին, եւ քննութեան չ'են անըրված: Ես պիտի ըսեմ որ այս անգործադրութիւնն է մեր վտանգը եւ ասով դատապարտելի է մեր գործադիր իշխանութիւնը: Խղճիս ազատ համոզմամբը հիմա ես զինքս ալ կը դատապարտեմ որ այն ինչ խնդիրը իւր լուծման կետին հասած, հարուած մ'ալ կու տանք անոր եւ ես կը մղինք: երբ ստիպողական խնդիր մը ունինք լուծելու մենք մանրակրկիտ քննադատութեամբ եւ երկարատարաւ պատճառբանութիւններով կը թաղենք զանի: Սոս խընդրոյն զալով՝ կը մերժեմ այն կարծիքները որք այս կամ այն քաղաքականութեան հետքեր կ'ենթադրեն անոր մէջ, Իրիճս կը վկայէ որ ընտրութիւնը գաւառին յանձնելով խոռվութեաց տեղի կու տանք: եւ թէ Ընդհ. ժողովին ձեռք կատարվելուն մէջ վտանգ մը չը կայ: Քրիստոնէութեան մէջ կեդրոնացումը միութիւն է եւ բարոյականութեան մէջ միութիւնը ոյժ է: Քրիստոնէութեան այս ընդհանուր բարոյականութեան առջեւ գաւառին իրաւունքները կը ցնդին: Եթէ Ռուսիանէն էֆէնտին վտանգ կը նշմարէ խնդրոյն մէջ, եւ վտանգը անգործութեան մէջ կը տեսնեմ:

ՌՈՒՍՈՒՅԵԱՆ Վ. ԷՖ. — Սրբազան Հարք եւ Մեծապատիւ Տեմիրք:

Հասարակային խնդրոց վրայ կարծիք մը կամ առաջարկութիւն մը՝ ընդունելու համար՝ ոչ միայն օրինաւոր ըլլալու է, այլ և օգտակար, այլ և գործադրելի: Ասկէջ զստ, ազգի մը կենաց մէջ այնպիսի պարագաներ, այնպիսի գերազոյն վարկեաններ կան, ուր մասնաւոր շահերը, մասնաւոր իրաւունքները կը լսեն հասարակաց շահուն ընդհանուրին իրաւանց առջեւ:

Մեզ գրադեցնող կաթողիկոսական խնդիրն ալ, Տեւորք իմ, այս կարգէն է:

Հայաստանեայց եկեղեցւոյ միութեան շահը կը պահանջէ, որ իր պաշտօնէից գլուխ ընդհանրական հայրապետը՝ այն է՝ կաթողիկոսը մէկ ըլլայ: Գծարդարար այնպէս չէ, Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետութիւնն այս օրուան օրս երեք գլուխ ունի մի և նոյն աւանդով, մի և նոյն աստիճանաւ, մի և նոյն իրաւասութեամբ, երեքն ալ կաթողիկոսի՝ այն է ընդհանրական հայրապետի տնօրոս կը կրեն, բայց երեքն ալ ընդհանրականութենէ՝ զուրկ են բաւին բուն նշանակութեամբը: Ս. Էջմիածնայ աթոռն Արարատեան Մայրաթոռ, և և նոր դահաւայն ամենայն Հայոց կաթողիկոս կը կոչենք. բայց իրականութիւնն ասոր հակառակ կը ցուցնէ: Ո՛չ, Տեւորք իմ, Ս. Էջմիածնայ Հայրապետն իր ներկայ գրից մէջ ամենուն Հայոց Հայրապետը չէ, այլ ազգին մէկ մասին, թէ և մեծագոյն մասին: Եթէ ուրիշ հարիւր հազար Հայ ժողովուրդ, ազգին գրեթէ երրորդ մասը, անոր իրաւասութիւնը չ'են ճանչեր, այլ ուրիշ երկու կաթողիկոսներ կամ անուամբ և կթ ընդհանրական հայրապետներ կան, որ ազգին այդ մասին հոգեւոր հովուապետութեան պաշտօնը կը վարեն, Ս. Էջմիածնայ հայրապետէն աւելի ազատ և աւելի անկախ իրաւասութեամբ Չխարենք ինքզինքնիս, Տեւորք իմ, ազգային եկեղեցւոյ նուիրապետութիւնն այսօրուան օրս իրօք և ազգըլուխ մարմին մըն է: Հայաստանեայց եկեղեցին երեք մասնաւոր հայրապետ ունի ընդհանրական անունով: Ասիկայ անտեղութիւն մըն է, որ պէտք է վերնայ, պէտք է որ Հայաստանեայց եկեղեցին մէկ ընդհանուր հովուապետ ո՛ւնենայ. պէտք է որ Ս. Լուսաւորչի յաջորդը, Էջմիածնի հայրապետն իրօք ամենայն Հայոց կաթողիկոսն ըլլայ. այսպէս կը պահանջէ եկեղեցւոյ նուիրապետութեան կարգը, այսպէս կը պահանջէ մեր ազգային եկեղեցւոյ միութիւնը, այսպէս կը պահանջէ նաեւ օրի-

նաւորութիւնը: Բայց այդի անտեղութիւնը վերցնելու կամ ուղղելու համար կրնանք վերցնել Սոս կը Ազգամարաց կաթողիկոսութիւնները: Չեմ կարծեր որ այս երեսփոխանական պատկանելի ժողովիս մէջ գանձի մէկը՝ որ համարված չ'ըլլայ թէ խիստ վտանգաւոր ձեռնարկութիւն մըն է զանոնք վերցնելու ելնելը: Գարեբն այն աթոռները և թիւ հարիւր հազար Հայ ժողովրդոց սրտին ու խղճին վրայ հաստատած ու ամրադրուած են. մեր կարողութենէն վեր է զանոնք քակել: Բայց եթէ չ'ենք կրնար վերցնել, արդեօք չ'ենք ալ կրնար զանոնք օրինաւոր վիճակի մը մէջ դնել: Չենք կրնար այն աթոռներն իրրեւ մասնաւոր հայրապետութիւններ պահելով, Մայր Աթոռոյ հետ ներդաշնակաւոր յարաբերութեամբ կապել: Չենք կրնար Ս. Էջմիածնայ հայրապետութիւնն իրօք և և ոչ թէ լսի անուամբ ամենայն Հայոց հայրապետութեան վերածել: Ար յուսամ, մասնաւոր կը հաւատամ թէ կրնանք: Այո, Տեւորք իմ, այս երեսփոխանական ժողովը կըրնայ ընել այս բանը. բաւական է որ համաձայնութեամբ որոշէ: Չկայ ողջամբտ Հայ մը՝ որ այս բանին չը փախաքի ի սրտէ: Ս. Գրեգոր Լուսաւորչին աթոռն ամենայն Հայոց հայրապետութեան աթոռն է, ազգային եկեղեցւոյ միութեան հիմն է, նեցուկն է, կապն է, մի է, ընդհանրական է, և այնպէս պէտք է ըլլայ: Կնչպէս ուրիշ եկեղեցեաց, նոյնպէս և մեր ազգային եկեղեցւոյ նուիրապետութեան կարգին մէջ քանի մը կամ շատ հայրապետներ կրնան գտնուիլ, այլ ընդհանրական հայրապետը մէկ պէտք է ըլլայ:

Բայց ուս միութիւնը հաստատելու համար, Տեւորք իմ, ազգն իրօք տէր պէտք է ըլլայ այդ աթոռներուն. այդ աթոռները քանի որ կան, Հայաստանեայց եկեղեցւոյ կը վերաբերին, իսկ հայաստանեայց եկեղեցին Հայոց ազգին է, և Հայոց ազգին ամենամեծ մասն ալ Թուրքիոյ մէջ է, որոյ բոլորին ներկայացուցիչն է այս երեսփոխանական ժողովը:

Ոչ ոք կրնայ ժխտել, Տեւորք իմ, ազգային եկեղեցւոյ միութեան շահը հասարակաց շահն է. իսկ այդ շահը պահպանելու ու ապահովելու ընդհանուրին իրաւունքն ու միանգամայն պարտքն է: Թուրքիոյ Հայ ժողովուրդն իր ազգային շահերն ու իրաւունքները պահպանելու ու ապահովելու պաշտօնն իր երեսփոխաններուն յանձնած է: Ուրեմն այս ժողովը Գրեգոր չ'է, ժողովրդեան իրաւանց ներ-

կայացուցիչն է, յանուն Թուրքիոյ ընդհանուր Հայ ազգին, յանուն ընդհանուր ժողովրդեան կը գործէ: Ուրեմն այս ժողովին իրաւունքը՝ ընդհանուր ազգին իրաւունքն ըլլալով, մասնաւոր իրաւունքներէ բարձր է, գերազանց է. հետեւաբար, երբոր ընդհանուրին շահը պահանջէ, մասնական շահերը, մասնական իրաւունքները ևս կը մնան:

Արդ, Տեւորք իմ, ազգային եկեղեցւոյ շահը և այն եկեղեցին կարծող ընդհանուրին իրաւունքը կը պահանջեն որ ամենայն Հայոց կաթողիկոսը մէկ ըլլայ, Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ հայրապետական ընդհանուր իրաւասութիւն ունենայ իրօք և ոչ թէ լսի անուամբ. հարկ է ուրեմն որ Սոս կը Ազգամարաց կաթողիկոսներն ալ իրրեւ մասնաւոր հայրապետներ կամ պատրիարքներ՝ այն ընդհանրական իրաւասութեան հաւատակին, որպէս զի Հայաստանեայց եկեղեցւոյ միութիւնն ապահովի, և ազգին եկեղեցական նուիրապետութիւնը և ազգըլուխ մարմին մ' ըլլալէ՝ զազրի:

Ազգային եկեղեցւոյ շահն և հանրական իրաւունքը կը պահանջեն որ Սոս կը Ազգամարաց աթոռները բարեկարգին, ազգային եկեղեցւոյ նախատինք, օտարաց դայթակղութիւն ըլլալէ՝ գազրին, և այնչափ հարիւր հազարաւոր Հայ ժողովրդոց շինութեան պատճառ ըլլան և ոչ բարոյական թշուառութեան, ինչպէս որ եղած են զժրաղդարար այս օրվան օրս: Այո՛, Տեւորք իմ, ձեզնէ շատերուն յայտնի է, որ Հայաստանեայց եկեղեցին քայքայման վիճակի մէջ է այն կողմերը, և ժողովուրդն անխնամ մնալով խուճախ խուճախ օտար փարախներ կը դիմէ հոգեւոր միջնորդութիւն գանելու: Եկեղեցւոյ և ազգին շահն անյապաղ դարձան կը պահանջէ այս ողբալի վիճակին: Ուրեմն ազգային երեսփոխանութեան անհրաժեշտ և նուիրական պարտականութիւնն է փոխել այն աթոռոց նկատմամբ մինչև հիմա բռնուած բարձի թողի ընթացքը, և զանոնք իր խնամարկութեան ենթարկելով բարեկարգելու հոգ տանիլ: Ահա այս անհրաժեշտ հարկին առջեւ, եկեղեցւոյ և ազգին հանրական շահուն և իրաւանց առջեւ պէտք է լսեն մասնաւոր շահերը, մասնաւոր իրաւունքները, եթէ կան:

Երեսփոխանական Ընդհանուր ժողովը պէտք է որ իր հանրական իրաւամբ, յանուն ընդհանուր Հայ ժողովրդեան Թուրքիոյ ձեռք առնու-

այս վրկութեան մեծ գործը և կատարէ. պէտք է որ արժանաւոր դահաւայներ զնէ այդ երկու աթոռոց վրայ, անոնց հոգեւոր իրաւասութեան սահմանները որոշէ, իրենց արդի անկախ կամ մասնաւոր պատամբական գիրքէն հանէ, կանոնաւորէ, բարեկարգէ, և Մայր աթոռոց հետ օրինաւոր յարաբերութեամբ կապէ:

Սոս կը Ազգամարաց կաթողիկոսներն առաջնորդ չ'են, այլ առաջնորդոց կախկոպուներ ձեռնադրող են. հովիւ չ'են, այլ հովուապետ են. Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ բարձրագոյն աստիճանաւորներ են, մեծ դեր, մեծ պաշտօն, և հետեւաբար մեծ ազդեցութիւն ունին եկեղեցւոյ և ազգին մէջ: Եւ որովհետեւ եկեղեցին ազգինն է, պէտք է որ այդ կաթողիկոս անունով հայրապետներն ալ ազգէն կախուճ ունենան, ազգին համարատու ըլլան, առանձին և ինքնազուլիս մնալով ու զանաւոր պէս չ'առնուն չը ծախեն, անարժան մարդոց կախկոպուական աստիճան տալով՝ այնչափ հարիւր հազարաւոր Հայ ժողովրդոց մեր եղբարց՝ թշուառութեան և կորստեան պատճառ չ'ըլլան, օտարաց առջեւ Հայոց ազգն ու եկեղեցին չ'անպատուեն:

1865 ին վերջերը, երբոր կաթողիկոսական երեք աթոռներն ալ թափուր էին, Սահմանադրական Ընդհանուր ժողովն յանձնաժողով մ' ընտրեց, որ կաթողիկոսական յանձնաժողով կոչուեցաւ, և որուն ևս ալ անգամ ըլլալու պատիւն ունէի. այն յանձնաժողովին մէջ էին ազգին ամենէն հմուտ և ամենէն աւելի վրաստանութիւնը վայելող կախկոպուները, Արիստակէս, Անդրէաս, Ներսէս, և Սէթեան: Այն Արքազան հայրերն ալ ճշդիւ այսպէս նկատեցին խնդիրը: Խորհեցան որ երկու երկրորդական աթոռները Մայր աթոռոց հետ կապելու, բարեկարգելու և հայաստանեայց եկեղեցւոյ միութիւնն ապահովելու միակ միջոցն էր՝ անոնց դահաւայներն ընդհանուր ժողովոյ ձեռք ընտրել և անոր պատասխանատու ընել: Ասոր համար առաջարկեցին որ Ընդհանուր ժողովն այդ երկու աթոռոց միաբաններուն երեքական ընտրելի որոշել տայ և անոնց մէջէն արժանաւորագոյնն ընտրէ, ինչպէս որ կ'ընարէ Նրուսաղէմայ Պատրիարքը: Ընդհանուր ժողովն իր հաւանութիւնը չ'որհեց յանձնաժողովոյ տեղեկագրին, և ըստ այնմ Մայր աթոռոց հայրապետին ընտրութիւնը կատարուեցաւ մասնակցութեամբ Սոս կը Ազգամարաց

աթոռոց, եւ այսպէս յանձնաժողովը միութեան առաջին քայլն առնուլ առաւ այդ աթոռու-րուն :

Այս առաջարկված, ընդունված եւ ակազած միութեանն աւելի կ'ուզեն հիմա մեր պատուական անգամակիցներէն ոմանք՝ սխալ հասկցած խզճմտութեամբ մը, եւ ներքի ինձ ըսել, երեւակայական անհիմն կասկածներով, կ'առարկեն թէ Սոյ եւ Աղթամարայ կաթողի-կոսներն ընդհանուր ժողովն ընտրելով ընդ-հանրական Հայրապետ ճանչած կ'ըլլայ, թա-ղաւորէ ճիշտը թողաւորազուն կ'ըլլայ, կ'ըսեն եւ այս սխալ խորհրդածութեամբ սխալ առա-ջարկութիւն մը կ'ընեն, այսինքն յիշեալ աթո-ռոց թեմական ժողովներն ընտրեն այդ կա-թողիկոսները եւ ընդհանուր ժողովն ալ վա-ւերացնէ : Ընտրելու իրաւունքը ըստ սահմա-նադրութեան ժողովրդինն է, կ'ըսեն, ընդհա-նուր ժողովը պէտք չ'է ժողովրդին այդ իրա-ւունքը յախշտակէ : Արչափ բառ, այնչափ սը-խալ :

Նախ, անտեղի է մտքէ անդամ անցնելը թէ մասնաւոր պաշտօնի մը համար ընտրված պաշտօնատար մը ընդհանուր ժողովէ ընտրվե-լուն պատճառաւ կրնայ երբէք իր մասնաւորու-թեան սահմանէն ելնել : Ինչպէս որ երուսա-ղեմայ պատրիարք ընտրված անձն անկէ ա-ւելի բան մը չը կրնար ըլլալ ինչպէս որ ընդհա-նուր ժողովոյ գիւմարին ատենադպիր ընտր-ված անձն ալ անկէ աւելի բան մը չը կրնար ըլ-լալ : Ընդհանուր ժողովէն ընտրված ըլլալով, նոյնպէս ալ Սոյ եւ Աղթամարայ մասնաւոր կաթողիկոսները միշտ եւ յաւիտեան Սոյ եւ Աղթամարայ մասնաւոր կաթողիկոս կը մնան, անկէ աւելի բան մը չ'են կրնար ըլլալ : Հուպա ժողովուրդը, ինչպէս կարելի է ուրիշ կերպ ընդունել տալ ժողովրդեան : Ընդհանուր ժո-ղովը կրնայ երեք միլիոն Հայ ժողովրդեան համոզմանը խզճին եւ կամայք իշխել, ժողո-վրդեան մասնաւոր ճանչածն ընդհանրականի փոխել, քանի որ իր պաշտօնը ժողովրդեան կամքին եւ ղզացմանց հետեւիլ է : ասկէց դատ, եթէ ընդհանուր ժողովը զանոնք ընա-րելով ընդհանրական ճանչած համարվի, միթէ անոնց ընտրութիւնը վաւերացնելովն ալ նոյն-պէս զանոնք ընդհանրական ճանչած եւ ըն-դունած չ'ըլլար ըստ նոյն խտտորակ տրամա-բանութեան :

Երկրորդ, Սոյ եւ Աղթամարայ կաթողի-կոսներն առաջնորդ չ'են, քաղաքական պաշ-

տան չ'ունին, ժողովրդեան հետ ուղղակի դործ չ'ունին, իրենց պաշտօնը կամ իշխանութիւնը զուտ եկեղեցական հովուապետութիւն է, ուս-տի սխալ կամ անտեղի է զանոնք առաջնոր-դի կարգ անցնելը : Սոյ եւ Աղթամարայ վիճակներն իրենց յատուկ առաջնորդներն ու-նին, որք ըստ Սահմանադրութեան՝ անդոյն ժողովուրդներէն պէտք է ընտրվին : Իսկ կա-թողիկոսները՝ եկեղեցական նախարարապետ-թեան կարգին մէջ Մայր աթոռոց հայրապե-տէն ետեւ երկրորդ, իսկ Ն. Պօլոսոյ եւ Երու-սաղէմայ պատրիարքներէն բարձր են աստիճա-նաւ եւ հոգեւոր իրաւասութեամբ, վասն զի եպիսկոպոսներ կը ձեռնադրեն :

Երրորդ, վաւերացման կամ վճշտելի իրաւունք ըսվածը զոր մեր պատուական անգամակիցնե-րէն ոմանք, Մեծ. Ռուսինեան եւ Սոսնէն էֆէն-տինները, կը բարեհաճին ընդհ. ժողովոյ շնորհել պարգապէս երեւակայական է, եւ բնաւ գործնա-կան նշանակութիւն մը չ'ունի : Մտածեցէք, Տեառք իմ, եթէ Սոյ Նիկողոս եպիսկոպոսին եւ Աղթամարայ Խաչատուր եպիսկոպոսին կա-թողիկոսական օժուժը կրօնապէս անկանոն եւ ապօրինաւոր չը դատվեր եկեղեցական Համա-դումար ժողովէն, ընդհ. ժողովը կրնար զանոնք արգելուլ կաթողիկոսութիւնէ : — Բնաւ երբէք : Ընդհ. ժողովը վաւերացնէր կամ ոչ, անոնք կա-թողիկոս կ'ըլլային եւ կը մնային, այսինքն ի-րենց հոգեւոր իշխանութիւնը կը վարէին ա-ռանց ամենեւին բանի տեղ գնելու մեծապա-տիւ Սոսնէն էֆէնտինի վաւերացումը : Եւ ինչ ի-րաւամբ կրնայ ընդհ. ժողովը թեմական ժողո-վրդեան ընտրածն արգելուլ, մանաւանդ եր-բոր կրօնական օժուժն ալ ըստ եկեղեցական կանոնի կատարեն : Այս պարագայիս մէջ ընդհ. ժողովոյ ընելիքը՝ միմիայն կատարված իրո-ղութիւնը կրաւորաբար ընդունիլ եւ վաւերաց-նել է կամայ ակամայ թող կ'ուզէնէ չ'ընդու-նի, կ'ուզէնէ չը վաւերացնէ, որով հող. գոր-ծը կատարված է, կաթողիկոսն ընտրված, օժված, հաստատված է, թէ եւ տգէտ, ա-պիկար ու բոլորովին անարժան մարդ մը եղած ըլլայ :

Չորրորդ, Ս. Էջմիածնայ Հայրապետը Թիւր-քիոյ մէջ ունեցած թեմական ժողովուրդներէն ուղղապէս չ'ընտրվիր, այլ ընդհ. ժողովէն, որ Թիւրքիոյ մէջ երեք կաթողիկոսաց ալ թեմա-կան ժողովրդոց երեսփոխանն ու ներկայացու-ցիչն է : Արդ, մինչդեռ Մայր աթոռոց թեմա-

կան ժողովուրդները, որ աւելի բազմաթիւ են, ուղղակի ընտրութեան իրաւունք չ'են գործա-դրեր, Սոյ եւ Աղթամարայ թեմականաց հա-մար ուղղակի ընտրութեան իրաւունք պահան-ջել եւ ընդհանուր ժողովոյ ընտրութիւնը նոյն ժողովրդոց իրաւանց յախշտակութիւն համա-րին անտեղի հակասութիւն մը չ'է : Եթէ աղ-զին մէկ մասին համար դատ իրաւունք, մէկ ուրիշ մասին համար ալ դատ կրնայ ըլլալ : Եր-կու տեսակ չափ եւ երկու տեսակ կշիռ կրնայ ըլլալ միեւնոյն ազգի միեւնոյն եկեղեցոյ ժո-ղովրդոց համար : Ժողովրդեան աւելի մեծ, ա-ւելի յառաջադէմ եւ աւելի ձեռնհաս մասին ուղղապէս չը գործադրած իրաւունքը պահան-ջել այնպիսի ժողովրդոց համար, որք այսօր-վան օրս՝ մեծ մասամբ եւ ոչ իսկ իրենց ա-ռաջնորդն ընտրելու սահմանադրական իրա-ւունքը գործադրելու վիճակի մէջ են : (1)

Ահա այսպէս, Տեառք իմ, Հայաստանեայց եկեղեցոյ միութեան շահն ու իրաւունքը, որ ընդհանուր ազգին շահն ու իրաւունքն է, Սոյ եւ Աղթամարայ թեմականաց մասնաւոր եւ սը-խալ հասկցված իրաւունքին զոհել կ'առաջար-կեն Մեծ. Ռուսինեան էֆէնտին եւ իր համա-խոհները, անշուշտ սխալ ըմբռնելով խնդիրը : Վասնզ կայ, կ'ըսէ Ռուսինեան էֆէնտին. այս կայ, բայց ոչ իր երեւակայածին պէս : Վասնզը, Տեառք իմ, իր առաջարկութեան մէջ է, վասն զի իր առաջարկութիւնը ներկայ ող-բալի վիճակին շարունակութիւնն է, այն է Հայաստանեայց եկեղեցոյ երեք գլխոց բաժանե-ալ վիճակը : Սոյ Նիկողոս եպիսկոպոսն ալ ճշգիւ Ռուսինեան էֆէնտինի եւ իր համախոհ-ներուն ըսածը կ'ըսէ, «Ինչ կը խառնվիք մեր գործին, դուք Էջմիածնայ կաթողիկոսին թեմականն էք : Ինչ իրաւունք ունիք Սոյ ա-թոռին վրայ» : Այսպէս ըսաւ նաեւ Բ. Դուրը, անշուշտ Նիկողոս եպիսկոպոսի եւ անոր կողմ-

(1) Ատենադպիրը՝ որ այս ատենախօսութեան պա-հուն ներկայ ալ չ'էր, ասպարեթեան փորձերը սրբադ-րած ատեն՝ զարմանալով կը հարցնէ ինքնիրեն եւ հետա-քրքիր է գիտնալու թէ ատենադասն ուրիշ է աւելի ժո-ղովրդեան այս ուղղակի ընտրութիւնը որու դէմ կը զինու-րի միջդեռ մինչեւ հոս խօսողաց ոչ մեկուն բերնն էած այդ բառը, ընդհանրապէս չը կայ որու դէմ կը մտնուի. եւ ընդհակառակը՝ ընտրութիւնը գաւառինն է ըսողները միշտ դատաւական ժողովն իմացած են որ ըլլ ժողովուրդը կը ներկայացնէ եւ այնպէս բացատրած են ինչպէս նաեւ բո-լոր առաջնորդաց ընտրութեանը համար. վրայ նախընթաց բոլոր ատենախօսութիւնը :

Ռուսի հաշի կը տեսնէ խօսքին այս կտորը՝ իրեն-տեսնաբանական զիջակ հոս իր տեղը ուղղել յօգուտ պատմութեան ինչպէս :

նակցայ թեւադրութեամբ : Բայց ներկայ աղ-գային վարչութիւնը հասկցուց Բ. Դրան թէ եկեղեցին Ազգինն է, Ընդհ. ժողովը Սոյ եւ Աղթամարայ ժողովրդոց ալ երեսփոխանն է, թէ Սոյ աթոռն ազգին եկեղեցոյնն է, թէ Ն. Պօլոսոյ Պատրիարքը բոլոր Թուրքիոյ Հայոց գլուխն ըլլալով, իր կրօնական ժողովին հետ իրաւունք եւ իշխանութիւն ունի Թուրքիոյ մէջ գտնուած բոլոր աթոռներուն եւ եկեղեցեաց բարեկար-գութեանը հակելու :

Մեծ. Ռուսինեան էֆէնտին եւ Սոյ Նիկողոս եպիսկոպոսը կատարելապէս համաձիւր են այս մասին : Թողու որ Սոյ թեմական ժողովուրդք ընտրեն Սոյ կաթողիկոսը, այսինքն թողու որ Նիկողոս իր կողմնակիցներուն ձեռք ամեն ջանք ընէ, իր ապօրինաւորութեանը մէջ հաս-տատվելու յաջողի, ապագային մէջ ալ այս ապօրինաւորութիւնները շարունակին, եկեղե-ցին ալ իր բաժանումն եւ հետեւաբար քայքայ-յուժը նախադործէ երեսփոխանական ժողովոյ քրէտով : Տարակոյս չ'ունիմ, Տեառք իմ, որ Մեծ. Ռուսինեան էֆէնտին, որոյ անկեղծու-թեանը վրայ չ'եմ կասկածիր, եթէ խնդիրն այս-պէս հիմնական կերպով քննէր, եթէ Սոյ եւ Աղթամարայ թեմերուն տրուր վիճակը գիտնար, անոնց մէջ տիրած կրօնական ողբալի անիշխա-նութեան եւ քայքայման տեղեկութիւն ունե-նար, իր առաջարկութեան հետեւանքը լաւ կը հասկնար, եւ ասկէց չորս տարի առաջ սոյն խնդրոյն վրայ ունեցած համոզումը հիմա չ'էր փոխեր, այն յարգոյ լրագրապետին պէս, որ 1866 ին այս ընդհ. ժողովին մէջ մեղի հետ քրէ-տուեր, եկեղեցական համադումար ժողովոյ ո-րոշումն ընդուներ, Սէրվիլէն էֆէնտինի դիտո-ղութեանց դէմ մաքառեր, ազգային լրագրա-պետաց հետ բողոքոյ ուղերձ մ'ըստորագրելով Պօլոսո Պատրիարքին ներկայացուցեր, Համա-դումար եւ ընդհ. ժողովոց որոշման անյա-պաղ գործադրութիւնը խնդրելէր, եւ հի-մա ելեր այն որոշումն իր լրագրին մէջ Գիւն-կ'անուանէ, ի դայթակղութիւն ժողովրդեան, ինչպէս որ Մեծ. Ռուսինեան էֆէնտին ալ վը-տանդ, խորխորատ, գահալէժ, անդունդ եւլ-կ'անուանէ :

(Հոս Ատենապետը ընդմիջելով ատենաբանին խօսքը՝ գիտել կու տայ թէ իրաւունք չ'ունի այն յարգոյ լրագրապետին դէմ խօսիլ հոս ուր ինքը ներկայ չ'է, ժողովին անդամ չ'է եւ հետե-ւաբար չը կրնար պատասխանել ուստի ներքի չ'է բացակայից դէմ խօսիլ լրագրապետի մը հետ վէճերնից լրագրի մէջ կրնաք ընել : — Ինչ-

պէս կրնամ լրագրին մէջ գնել հոս չը խօսածս ըսելով շարունակեց ասեմարանը :

Ահա, Տեարք իմ, հինգ տարիէ ի վեր ունեցած անխախտ համոզմանս համեմատ խնդիրն իր ամեն պարագաներով բացատրեցի, որչափ որ կարողութիւնս կը ներէ : ուստի եղբակացնեմ :

Ես կը փափաքիմ որ Հայաստանեայց եկեղեցին իր մէջ բաժանման վտանգ սպառնացող մեծ անտեղութենէ մը ազատի : փոխանակ, ինչպէս է հիմա, երեք գլխով մարմին մ'ըլլալու, փոխանակ ընդհանրական անուանով երեք մասնական կաթողիկոսներ կամ հայրապետներ ունենալու, մէկ ընդհանուր կաթողիկոս մ'ունենայ, Ս. Էջմիածնայ Վեհ. Հայրապետը, որուն հոգեւոր իրաւասութիւնն՝ ըստ հայրենի աւանդութեանց եւ կանոնաց իր պարտուպաշտ շահ գրից մէջ մտնելով ամենայն Հայոց վրայ իրապէս տարածվի : իսկ Սոյ եւ Աղթամարայ աթոռներն իբրեւ երկրորդական հայրապետութիւններ՝ Ս. Էջմիածնայ կաթողիկոսին գերազոյն իրաւասութիւնը ճանչնել եւ անոր հպատակին հոգեւորապէս : Ասոր համար կ'առաջարկեմ որ ազգը իբրեւ Հայաստանեայց եկեղեցին կազմող մարմին, այդ երկու աթոռոց գահակալներն ընտրելով իր ձեռքին մէջ, իր իշխանութեան ներքեւ առնու :

Մեր ընդդիմախօսները կ'ուզեն որ այդ ազգային աթոռոց գահակալները Սոյ եւ Աղթամարայ թեմական ժողովուրդներէն ընտրվին ուղղապէս : Իրենց բոլոր փաստարանութեանց սկզբնականն՝ այդ երկու աթոռոց գահակալներն իբրեւ պարզ առաջնորդներ նկատելու սխալ ըմբռնումէն ելած է, որով իւրաքանչիւր վիճակի ժողովրդոց իրենց առաջնորդն ընտրելու մասնաւոր եւ անմիջական իրաւունքն ազգին եւ եկեղեցւոյ հանրական իրաւանց հետ չը փոխելով, Մայր աթոռոց թեմական ժողովրդոց համար չը պահանջված իրաւունքը Սոյ եւ Աղթամարայ թեմական ժողովրդոց տալ կ'ուզեն, որով այդ երկու մասնաւոր հայրապետները կաթողիկոս անուանով մինչեւ հիմա բռնած ինքնազուխ եւ տեսակ մը ապստամբական դիրքերնին կը պահեն, կը շարունակեն, եւ ազգային եկեղեցին կրօնապէս երեքի կը բաժնովի երեք մասնական կաթողիկոսութիւններով : Քաղաքական բաժանումն ալ ապագային մէջ կը դիւրանայ իբրեւ տրամաբանական հետեւանք :

Այս երկու առաջարկութիւններէն մէկը պիտի ընդունիք, Տեարք իմ, իրենց ամեն հետե-

ւանքներով : Լաւ խորհեցէք, կշռեցէք, եւ ըստ այնմ ձեր որոշումն բրէք : Խնդիրն արդէն եկեղեցական Համագումար եւ Ընդհ. ժողովներով որոշված էր, հիմա նորէն քննութեան ու վիճարանութեան քովէն անցնելով առաւել պարզվեցաւ : Ուստի պէտք է որ իր վերջնական լուծումն ընդունի :

Հերիք յուզվեցանք, վրդովեցանք, տաղնապեցանք հինգ վեց տարիէ ի վեր, հերիք ծաղրը ու ծանակ եղանք օտարաց առջեւ, հերիք այնչափ հազարաւոր ժողովուրդ զո՞ տուինք օտար որսորդաց ճանկերուն : Խնայենք, ազգին պատուոյն, խնայենք այնչափ հարիւր հազարաւոր ժողովրդոց, որք ակնկառոյց այս Ընդհ. ժողովոյ ձեռնտուութեանը, պաշտպանութեանը ու խնամարկութեանը կ'ըստասեն : Զը յուսահատեցնենք այն մեր եղբայրները, եթէ արդէն չ'են յուսահատած : ազատենք վարչութիւնն այս դժբաղդ խնդրոյն հոգիւրէն : ազատենք նաեւ ինքզինքնին եւ ընդհանուր ազգը : Թոյլ տանք Վարչութեան, որ այդ երկու աթոռոց միարանութիւններուն ձեռք երեքական ընտրելի որոշել տայ, Ընդհ. ժողովոյ ներկայացնել, եւ անոնց մէջէն արժանաւորագոյններն ընտրելով պէտք եղած բարեկարգութեանց կանոններն ընդունել տանք անոնց, Հայաստանեայց եկեղեցւոյ միութիւնն ապահովենք, եւ հարիւր հազարաւոր Հայ ժողովուրդ կորստեան վտանգէ փրկենք :

ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Ձեմ գիտեք թէ գիււհի կամ քաղաքական ժողովի անգամ ըլլալ պէտք է որ առաջարկութիւնը ժողովին ներկայանայ : Յարաբերութեանց խնդիր մը առաջարկեցի թող ներկայանայ եւ հարցվի ժողովին, եթէ այս յարաբերութիւնները պէտք են թէ ոչ :

ՕՏԵԱՆ ԷՖ. — Փափազեանն էֆէնտի առաջարկութիւնը նոր չ'է, արդէն եղած է, Սրբազան պատրիարքին առաջարկութիւնն է : Եթէ ժողովն որոշէ որ ատեն է յուզել Էջմիածնայ կաթողիկոսի խնդիրը, առաջնորդն խնդիրը, այն ատեն կը նայինք :

Երկու խնդիր կայ հիմա զբոված Ընդհ. ժողովին առջեւ : Ռուսինեանն էֆէնտին առաջարկութիւնն ըրաւ եւ քաղաքական ժողովը յարեցաւ անոր : Հետեւաբար Ռուսինեանն էֆէնտի առաջարկութիւնը որ միանգամայն Քաղաքական ժողովին ալ ըսել է, քըւէի պիտի դրվի : ասի ընտրութեան համար : Երկրորդ կետը վաւերացման խնդիրն է : Քաղաքական ժողովը կ'ուզէ որ կեդրոնէն ըլլալու վաւերացումը

Ընդհ. ժողովով ըլլայ : Ռուսինեանն էֆէնտին ընդդիմութիւնն չ'ընէր այս մասին եւ անտարբեր է թէ Խառն ժողովով եւ թէ Ընդհ. ժողովով ըլլալուն : Այս մասին ես կարծիք յայտնել կ'ուզեմ, բայց որովհետեւ խիստ կարճ պիտի ըլլայ ըսելիքս, եթէ ժողովը կը ներէ այս մէկ անգամին համար առանց աթոռս ձգելու իբրեւ երեսփոխան ըսեմ իմ կարծիքս («Թե ի՞նչ է առաջնորդը ») : Սոյ կաթողիկոսութեան խնդրոյն մէջ իմ բռնած կետս արդէն ըսի ձեզի : Սոյ կաթողիկոսը պէտք է որչափ կարելի է աներեւի իբրեւ հակաթոռ, այլ մնայ իբրեւ կաթողիկոս : Խառն ժողովը վաւերացնել կ'ըսվի, որովհետեւ իբրեւ առաջնորդ կը նկատվի ինձի համար առաջնորդ չ'է այլ կաթողիկոս եւ կ'ուզեմ որ իբրեւ այն նկատվի եւ հետեւաբար վաւերացումը Ընդհ. ժողովով ըլլայ : Խառն ժողովով վաւերացեալ պաշտօնատարը Պատրիարքին ենթարկեալ պաշտօնատար մը կրնայ ըլլալ : Սոյ կաթողիկոսը Պատրիարքէն բարձր պաշտօնատար մըն է Ազգին եւ եկեղեցւոյ համար : Այս էր իբրեւ երեսփոխան ըսելիքս :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ս. Պատրիարքը բարձրէն բռնեց խնդիրը, մեր ըսածը տարբեր է : Պատրիարք զուխ է Օսմանցի Հայոց, եւ մեր ու Էջմիածնայ մէջ յարաբերութիւնն մը կայ, նոյն իսկ վաւերացման խնդիրն ալ յարաբերութիւնն մըն է : քըւէի գնենք՝ եթէ չ'ընդունի երեսփոխանութիւնը, լաւ :

ԻՌԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — Խնդրոյն կարեւոր կետը եկեղեցւոյ վտանգն է եւ այս վտանգին առջեւն առնելը երեսփոխանաց գործն է : Եթէ ժողովը որոշէ որ ընտրութիւնը դաւառին թողվի, պէտք է նախ ասոնց յարաբերութիւնները որոշվին, առանց որոշելու ընտրելը եկեղեցւոյ բաժանման վտանգ է, արդէն փորձված է բաժանումը, պէտք է այս կետը նկատել :

ԵՌՍՈՒՅԵԱՆ ԷՖ. — Եր ցաւիմ որ դեռ չը կրցանք լուծել խնդիրը եւ այս ընթացքով մեր վիճարանութիւնները կրկնելու պիտի ելնենք : Իւթիւճեան եւ Փափազեանն էֆէնտիներուն պատասխանելով կ'ըսեմ որ այն կանոնները որք ծառայած են ընտրութեանց՝ պիտի ծառայեն նաեւ այժմ : ասի թերութիւնն մըն է որ Սահմանադրութեան խմբագիրք չ'են տեսեր : ասկէ ինը տարի առաջ աւելի մեծ յուզում մ'ունեցաւ Ազգը Երուսաղէմայ Պատրիարքի համար, ինչպէս որ մէկ կողմէն անոր ընտրութեանը ձեռնարկվեցաւ միւս կողմէն անոր յարաբերութիւնները կարգի դրվեցան, այժմ ալ նոյնպէս կ'ըլլայ եւ կար-

ծիքները կը միարանին, որով թէ Պատրիարքին առաջարկութիւնը եւ թէ Ազգին փափաքը տեղը կը գտնեն :

(Շաք Տ'անդաճէր Էր + Է Է Է Է Է) :

ՕՏԵԱՆ ԷՖ. — Ոչ մէկու մը խօսք կրնամ տայ՝ վերաբննեալ Սահմանադրութիւնը որ ամենուրէն ձեռքն է՝ մեծ կարեւորութեամբ նախատեսած է զայդ խնդիրը զոր կը յուզէք : ասոր համար յատուկ ճիւղ մը որոշած է վարչութեան պաշտօնին մէջ՝ Յարգելի Մասնորոշող մակդիրով որոյ պաշտօնը պիտի ըլլայ՝ Բ. Իրան, Էջմիածնայ եւ ամեն առաջնորդաց հետ վարչութեան ունեցած յարաբերութեանց սնորհնութիւնը : այս յօդուածը վերաբննութեան մէջ իր տեղը պիտի գտնէք, եւ այժմ ի դուր կը վիճիք : Արդ ամեն կարծիք յուզվեցան եւ վէճը բաւականացաւ, ալ հիմա խնդիրը քըւէի պիտի գնեմ :

(Ալեկ կողմէն քըւէ կը պօսան, Փափազեանն էֆէնտին կը բողոքէ : — մեծագոյն մասամբ կ'որոշվի քըւէի դրվիլը) : Ըստ կարգի նախադասութեան Ս. Պատրիարքինն առաջ, եւ յետոյ Քաղաքական ժողովին առաջարկութիւնը գնել կը հարկաւորէր : բայց Սրբազանն իրենը ետ առած է, եւ վարչութիւնը յարած ըլլալով այն առաջարկութեանն կ'ըսէ՝ ընտրութիւնը գտնուի եւ Էջմիածնայ յարաբերութիւնը քըւէի կը գնեմ :

ԱՅՎԱՏԵԱՆ Մ. ԷՖ. — Ասի Ռուսինեանն էֆէնտինն առաջարկութիւնն է :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Առաջարկողը պէտք է նկատել, այլ առաջարկութիւնը :

Փորձ եւ ընդդիմափորձ՝ 8 քըւէի դէմ կ'ընդունվի առաջարկութիւնը 38 քըւէով որոց կողմն է նաեւ Ս. Պատրիարքը :

(Քըւէից արդիւնքը յուզում կը պատճառէ եւ առաջարկողներ կ'ըլլան թէ գաղտնի ըլլայ քըւէարկութիւնը) :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես հարցի ժողովին, ոչ ոք գաղտնի պահանջեց քըւէարկութիւնը որ կատարվեցաւ եւ օրինաւոր է, չ'եմ կրնար փոխել : Հիմա քըւէի կը գնեմ Քաղ. ժողովոյ հարցումը՝ կեդրոնին վաւերացումը Խառն ժողովէն ըլլայ թէ Ընդհանուր ժողովէն :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այս խնդիրը նոր է, եւ այս կետը դեռ չ'է վիճարանեալ : ես եւ ինձի պէս շատերն ալ լուսաւորեալ չ'ենք այս կետին վրայ : ուստի ուրիշ ատենի թողուլ հարկ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւացի է դիտողութիւնը :

ԱՅՎԱՏԵԱՆ Մ. ԷՖ. — Ձեմ ընդունիլ որ Քաղ. ժողովին յարուցած մէկ նոր խնդիրը քըւէի

դրվի իմ առաջարկութենէս առաջ կարգն իմինս է, որովհետեւ Գաղ. ժողովին առաջին առաջարկութիւնը Ռուսինեան էֆէնտիին առաջարկութեանը յարելով մէջ խաղաց, ուստի կը պնդեմ ասկէ ետքը իմ առաջարկութիւնս դրովի, եւ յետոյ որինն է նէ կարգը:

(Գառորդ մը հանգիստ կը տրվի ժողովին)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոց կարգն է Սանճանագրութեան Վերաքննութիւնը. այս խնդրոյն չ'անցած, Ռուսինեան էֆ. խօսք ուղած է:

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Վերաքննիչ Յանճանագրութիւնն աշխատութեանցը վրայ տեղեկագիր մը կարդալու պատիւ ունեցայ. բայց թերութիւններ կան այն տեղեկագրին մէջ որ շտապաւ գրված ըլլալուն համար չը կրցաւ ամբողջանալ: Յուզված փոփոխութիւններէն զատ կան գլխաւոր փոփոխութիւններ ալ որք յօդուածոց մէջ առնված են ինչպէս կը տեսվի, իսկ տեղեկագիրը լրած է նոյն փոփոխութեանց պատճառներուն վրայ. զորօրինակ՝ եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան փոփոխութիւնը եւ վերաքննութեան յօդուածին իմաստը: Զայս պատճառաբանութիւնները տալով այսօր նոյն տեղեկագրութեան թերին լցնել է միտքս. որպէս զի ատենագրութեանց մէջ տպեալ օրինակը թերի չը մնայ, եւ այս կտորն ալ կարենամ պաշտօնագլխս յարել նոյն օրինակին: Եթէ ժողովը կ'ուզէ՝ կարդամ այս յաւելուածը, եթէ ոչ՝ տպագրութեան զրկեմ եւ ժողովը ամբողջ տպեալ օրինակը կարգայ:

(Ընդհանուր հաւանութեամբ կ'որոշվի տրտալեալ օրինակին յաւելուել ատենագրութեանց մէջ):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վերաքննութիւնը թաղական մատակարարութեան գլխէն սկսած ըլլալով, կը հրաւիրեմ երեսփոխան էֆէնտիները նոյն գլխին վրայ զիտողութիւններն ներկայացնել եթէ ունին:

ԱՅՎԱՏԵԱՆ Մ. ԷՖ. — Այդ դուխը ծայրէ ի ծայր կարդացի. նախորդ Սանճանագրութեան վրայ գերազանց կատարելութիւն ունի. բոլանդակ գլուխը ընդունելի է ըստ իս, միայն 56 յօդուածին մէջ՝ ըստ տրամադրութեանց 27 28 եւ 29 յօդուածոց բոված ակնարկութիւնը քիչ մը մուծ է ընկեր. եթէ հոս ալ կրկնվի այն տրամադրութիւնը աւելի մեկին եւ իմանալի կ'ըլլայ:

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ. — Խնդրոց կարգին մէջ բան մը մտցանք, կաթողիկոսութեան խնդիրը յօդ-

նակի է, Սիս եւ Աղթամար. Աղթամարը մնացել է կ'առարկէք թէ Ասոյնը դեռ չը վերջացու, կարծեմ պէտք է որ Աղթամարինն ալ այնչափ յառաջ տանինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որոշման ժողովին քառորդ մը միջանկեալ հանգիստով երկու մասի բաժնած ենք նիստերը. մէկ մասը վերաքննութեան կը նուիրենք, եւ միւս մասը ուրիշ խնդրոց: Գալ նիստին Սոյ խնդիրը բողոքովին կը վերջանայ, յետոյ Աղթամարինը կըրնայ նայվիլ Գալով վերաքննութեան՝ Ռուսինեան էֆէնտիին տեղեկագրերն է Յանճանագրութիւն, աւոր անկ է զիտողութեանց պատասխանել. բայց չը կրնար առանձին առանձին ամենուն պատասխանել, այլ ամեն զիտողութիւնները լսելէն ետքը ամենուն մէկէն կարող է պատասխանել:

ԻՔԷԿՃԵԱՆ ԷՖ. — Հարցի անցեալ նիստին թէ ինչպէս պէտք է վերաքննել. մաս առ մաս յանճանագրութիւնը յանձնելով արդեօք՝ ինչպէս օրէն է. այս առաջարկութիւնս նկատի չ'առնըվեցաւ զիւանէն. կ'առաջարկեմ որ վերաքննութեան կերպը որոշէ նախ ժողովը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանին կողմէն պատասխանելով կ'ընդունիմ իւր կարծիքը որ նախ կերպը որոշվի. եթէ մեր ատենական կանոնները որոշած ըլլայինք, այդ կետը լուծեալ էր հիմա՞, իսկ յանճանագրութիւնը առաջարկութեանը համար կ'ըսեմ թէ՝ արդէն Ընդհ. ժողովն այդ մտածմամբ յանճանած է յանճանաբար ի մը որ իր տեղեկագիրն ալ բերած է ժողովին նախկան կարգին նայելով՝ նախ ընդհանուր սկզբանց վրայ ընդհանուր վիճարանութիւն կ'ըլլայ եւ յետոյ յօդուածոց քննութեանը կը մանվի. բայց կ'երեւայ թէ ժողովը հարկ է տեսեր այդ ընդհանուր վիճարանութեան, եւ անմիջապէս յօդուածոց քննութեան ձեռնարկել որոշած է. ուստի այժմ յօդուած առ յօդուած կը կարգայ դիւանը եւ կարգաւ կը լսվին զիտողութիւնները եթէ կան:

ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Կ'երեւի որ այս գործը պիտի շատ երկարի. եթէ զիտանք որ ատեն ատեն Ընդհ. ժողովը իրաւունք ունի ամեն անգամ մաս առ մաս վերաքննութիւններ ընելու, այն ատեն վիճարանութիւնները շատ կը կարճին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Զ'եմ կրնար այդ նիստին վրայ խօսքը թողուլ ձեզի, ժամանակին պէտք էր ընէիք այդ հարցումը:

(Շատ մը երեսփոխանք այլ եւ այլ զիտողութիւն եւ հարցումներ կ'ընեն, ոմանք բառի սմանք իմաստի վրայ, Ռուսինեան էֆ. կը պահանջէ որ դրաւոր ըլլայ զիտողութիւնները եւ պատճառաբանեալ. առանց այս պայմանի անկարելի է պատասխանել կ'ըսէ իւրաքանչիւր հարցման, որոնք հարց ու պատասխան, յօդս պիտի ցնդին ապարդիւն):

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ. — Սանճանագրութեան մէջ այնպիսի կետեր կան որ ամեններով վիճարանութեանց տեղի կու տան: Ուստի երեսփոխանք պէտք է որ լաւ մը սերտեն զանի ծայրէ ի ծայր եւ բովանդակին ըմբռնելով զրի առնուն զիտողութիւններն եւ այնուհետեւ ներկայացնեն, որպէս զի գործը դիւրանայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանին կ'ընթանայ գործը, եթէ երեսփոխանք կանխաւ կարգան ու սերտեն եւ որոշեն զիտողութիւններն մանաւանդ թէ եւ խմբագրելին յօդուածը ինչպէս որ կ'ուզեն սրբագրել, եւ հոս առաջին անգամ լսելով մտքերնին եկածը չը խօսին, զի այն ատեն անվերջանալի կ'ըլլան խնդիրները:

ԻՔԷԿՃԵԱՆ ԷՖ. — Ժողովը որոշած է թաղական գլխէն սկսի վերաքննութիւնը, բայց ես զիտողութիւն մ' ունիմ որ կ'ապացուցնէ թէ այդ վերաքննութիւնը ուղիված տեղէն չ'ըսկըսվիր:

(Ատենագրեալ էֆ. կ'ազդարարէ որոշեալ կետի վրայ չը վերադառնալ):

ԻՔԷԿՃԵԱՆ ԷՖ. — (Իր զիտողութեանը դառնալով) Կանխաւ կը յայտնեմ որ զիտողութիւն ընելու չըջանին մէջ եւ ընդհանուր տեսութիւն մ' ընելու իրաւունք ունիմ ինչպէս անձիւր երեսփոխան ունի. ուստի ես կ'առաջարկեմ որ՝ 53 յօդուածը փոխանակ ըկսելու՝ « թաղերը կը ներկայանան իւրաքանչիւրն իր եկեղեցւոյ ժողովրդէն » ըսվի՝ « իր ժողովրդէն » որպէս զի ամեն հայ անուն կրող անձ իմացվի եւ խտրութիւն չ'ըլլայ ամենեւին, որով մեր դուռները բաց ըլլան ամեն անոնց որ մեզի հետ կ'ուզեն միանալ. եթէ ճշմարտիւ ազգային միութեան փափաք կայ որ եւ է եկեղեցւոյ անդամ գտնող մեր եղբարց հետ:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ. — Սոյն յօդուածին մէջ յիշված եկեղեցւոյ մեծաւորը պէտք է որ ոչ միայն Թաղական ժողովոյ մէջ այլ եւ մատակարարութեան մէջ իրաւունք ունենայ. այս մեծաւորները մինչեւ հիմայ իրբեւ օտար նկատված են թաղին մէջ:

ՔՐԻՍՏՈՍՏՈՐ ԷՖ. — Եկեղեցականք այն ատեն իրաւունք կ'ունենան, երբոր ժողովրդէն ընտրվին:

տեն իրաւունք կ'ունենան, երբոր ժողովրդէն ընտրվին:

ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Տ. Ամբրոսիոս Վարդապետ կ'ըսէ թէ եկեղեցականք թաղէն դուրս են, ուրիշ ձայն մ' ալ ժողովուրդին է այդ իրաւունքը՝ ըսաւ. բայց 60 յօդուածը այդ առարկութեանց տեղի է թողած. թող կարգան առարկողք: Իրէքճեան էֆէնտիին պատասխանելով կ'ըսեմ թէ, միութեան փափաքը ամենուս ալ է, բայց մենք կը փափաքինք որ միանալ ուղղուենք մեզի գան. ապա թէ ոչ՝ Սանճանագրութիւններս ծայրէ ի ծայր փոխել հարկ է:

ՔՕԼՕԼԵԱՆ ԷՖ. — Որովհետեւ բերանացի զիտողութիւնները չ'են կրնար վերջանալ, ճիշտ ասոր համար է որ որոշվեցաւ թէ դրաւոր ըլլան:

ԱՅՎԱՏԵԱՆ ԷՖ. — Իրէքճեան էֆ. ընդհանուր տրամադրութենէ դուրս խօսեցաւ, հետեւաբար անոր դէմ եղած խօսքերն ալ տեղի չ'ունէին. ասանկ դրսէն խօսքեր լսելու վերջը չը գար. դիւանէն կը խնդրեմ որ այսպիսի խօսքերու թոյտուութիւն չ'ընէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանին դէմ զիտողութեանց պատասխանելու ալ ծայրը չը գար. կը հրաւիրեմ յօդուածոց վրայ խօսիլ:

ԻՔԷԿՃԵԱՆ ԷՖ. — Ով որ կ'ըսէ թէ ես Սանճանագրութեան տրամադրութենէն դուրս խօսեցայ, կրնայ արդեօք ապացուցնել. գիտեմ որ իմ զիտողութիւնս շատերուն զգացմանց ու մտածմանց դէմ պիտի գայ. բայց մէկ խօսքով հերքելի առաջարկութիւն մը չ'է իմ ըրածս. ես ազատ եմ իմ կարծիքս բացատրելու եւ ընդարձակ իրաւունք ունիմ խօսելու. ով կարող է զայս իրաւունքս սեղմելու եւ խորհուրդիս սահման դնելու:

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Իրէքճեան էֆէնտիին կարծածին կամ ուղածին չափ ընդարձակ է խօսելու ազատութիւնն ու իրաւունքը. բայց անոր հետ մէկ տեղ անշուշտ կ'ընդունի որ՝ այդ իր իրաւունքին ընդարձակութեանը հետ իր պարտաւորութիւնն ալ նոյնչափ ընդարձակ է. ուստի երբ իր զիտողութիւնները գրով ներկայացնէ, անոնց պատասխանները կ'ընդունի. բայց իր գրգռած պատասխաններուն կամ ճառերուն երկարութենէն ինք ամենէն առաջ թող չը ձանձրանայ:

(Հետագայ նիստին համար Խնդրոց կարգն որոշվեցաւ նախ՝ վաւերացում ընտրութեան Սոյ կաթողիկոսին. եւ յետոյ կարգին մէջ յիշեալ խնդիրները):

Ա. ՊԱՏՐԻԱՐԿ. — Մեղք մը չըլլար կարծեմ ժողովրդեան հանրագիրներն առաջ անցնին, որոց մէջ պարբերակեալ է եւ Աղթամարայ խնդիրը:

Օ. ԽՅԱՍԱՐԵԱՆ ԷՅ. — Մեզի համար Աղթամարայ խնդիրը Սոսյ խնդրին հետ լուծեալ է իբրև սկզբունք. կը խնդրենք որ Վարչութիւնը տեղեկագրով մը ներկայացնէ այդ խնդիրը, եթէ կրկին հոս բերել կ'ուզէ, որպէս զի գիտնանք թէ ինչ կը խնդրէ եւ մեր է խնդիրը:


ԵՌԻՍՈՒՅԵԱՆ ԷՅ. — ճիշտ այդպէս կը մըտածէ Գաղաքական ժողովը, որ իր ընդհա-

նուր համարատուութեամբը մտ որերս պիտի ընէ, եթէ ընդհանուր ժողովը ժամանակն ուրոշէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ժողովը կարևորագոյն խնդիրներ ունի լուծելու, եւ այդ ընդհանուր համարատուութեան ստիպողական հարկ չը տեսներ հիմայ. ըստ օրինի սահմանեալ տարազուին ալ դեռ չ'է հասած. տ.ստի կրնանք դեռ քանի մը նիստ ետ ձգել:

Ատեանը վերցաւ ժամ 10:

ԱՏԵՆԱՊԵՏ	ԱՏԵՆԱՂԻՐ
Գ. ՕՏԵԱՆ	ԹԱԻՍՆԵԱՆ



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԴԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Դիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,
եւ կը գտվի ամեն գրաւաճառաց քով և Եկեղեցեաց բանկարնե ըր :